տեսնում հայրենիքի միութեան գործը, բայց, նամանաւանդ, հայ ազգի ֆիզիքական գոյութեան ճգնաժամային գործը, իբր ընդհանրական հայրապետ, մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կասենք օրհասական րոպէներին հայրական խրատով դիմել բոլորին և դգաստութեան կոչ անել— հա՛յ ժողովուրդ, համախմբուի՛ր քո հայրենի հանրապետութեան պահպանութեան գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկութեան միակ ճանապարհը.. Վտանգը և խիստ ծանր վտանգը քո դռանն է, հայ ժողովուրդ, զգոյշ եղիր և պատմութեան առաջ ծանր պատասխանատուութեան բեռի տակ մի՛ ընկնիր»:

Նոյնքան վճռական են և Անկուսակցականների Միութեան, Հայ Ժողովրդական Կուսակցութեան և Հայ Ռամկավար Կուսակցութեան ու Հայաստանի Խորհրդի կոչերը — անվերապահ դատապարտութիւն բոլշևիկների սկսած ապստամբութեան և ջերմ հրաւէր աջակցելու կառավարութեան՝ ճնշելու համար այդ ապստամբութիւնը: Անկուսակցականների Միութիւնը բոլշևիկներին անւանում է «ազգի տականքներ՝ կաշառած թրքական դրամով», «հայրենիքի գաղափարը ժխտող չարագործներ», «ազգի մատնիչներ և դաւաճաններ»: «Մեզ՝ անկուսակցականներիս համար ո՛չ մի կասկած չկայ և կարող էլ չի լինել, որ Մելքոնեանները, Նուրիջանեանները, Մուսայէլեանները և նրանց ընկերները հայ ազգի դաւաճաններ են»: «Անկուսակցականների միութիւնը իր լիովին վստահութիւնն է յայտնում կառավարութեան և հաւատում է, որ վերջինս կանգ չի առնելու վճռական և կտրուկ միջոցների առաջ, որպէսզի ապագայում անհնար դարձնէ մեր մեծ ու փոքր Վասակների չար գաւերը»:

Ուշագրաւ էր ռամկավարների կոչը. «Մեր աւերակ և քանդուած հայրենիքի մէջ, ասած էր այնտեղ, հայ ժողովուրդը բնաջնջող, մեզ կոտորող, մեր հայրենեաց լեռ ու ձոր, գետն ու վտակը հայ արիւնով ներկող Իթթիհատ կուսակցութիւնը, որ Նուրի ու Խալիլ փաշաներու միջոցով փոխադրուած էր Ադրբէջան, գառան մորթը վրան առած՝ մի օր, յանկարծ, Բագուի մէջ յայտարարեց սովետական իշխանութիւն և առաջին օրն իսկ իր նշանաւոր ուլտիմատումով պահանջեց հայկական հանրապետութենէն երեք օրէն յանձնել Ղարաբաղն ու Զանգեզուրը և իր զօրամբերն արդէն շարժման մէջ դրաւ Հայաստանի վրայէն երթալ միանալու Մուսթաֆա Քէմալ փաշայի հետ, որ մինչև այժմ կը շարունակէ ջարդել տասնեակ հազարաւոր հայեր Կիլիկիոյ մէջ, հակառակ մինչև իսկ ֆրանսական բանակի ցոյց տուած պաշտպանութեան:

Խելագար և երկու աչքերով կոյրը միայն կարող էր չտեսնել այս կերպով հայկական հանրապետութեան ընդհանրապէս և Թիւրքահայաստանին մասնաւորապէս սպառնացող նոր վտանգը. և, սակայն, գտնուեցան հայ անուն կրող մարդեր և հայ իրականութեան մէջ գործող, բայց հայ ոգիին ու զգացումներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դէմ, կողմնակից յայտարարեցին գիրենք այդ հայատաւ շարժման և Ալեքսանդրապոլի ու Կարսի մէջ դիմեցին եղբայրասպան կռիւ:

Այդ խելագարները ո՛չ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարուածը կուտան լուծման օրերու մէջ գտնուող հայկական հարցին, այլ մինչև անգամ հոգ չբրին, որ երկրի սահմանները կը բանան և կը